ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՍԻԱՅԻ» (ՆԱՖԱՐՈՍՖՅԼՈՄ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 85 - 86 (16281) ՇԱԲԱԹ, 1 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԱԲԽԱԶԻԱՅՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆ ԷՐ

Հոկտեմբերի 28-ին, Վրաստանի նախագահի Հավլաբարի նստավայրում, անցկացվեց Վրաստանի Ազգային անվտանգության խորհրդի նիստ, որին մասնակցեցին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Իրինա Իմերլիշվիլին, ԱԳ նախարար Մայա Փանջիկիձեն, եվրոպական եւ եվրանտլանտյան կառույցներին ինտեգրման հարցերով պետնախարար Ալեքսի Պետրիաշվիլին, հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Պաատա Զաքարեիշվիլին, խորհրդարանական երեք կոմիտեների նախագահներ Թեդո Ջափարիձեն, Իրակլի Սեսիաշվիլին եւ Վիկտոր Դոլիձեն:

Խորհրդի մշտական անդամները՝ ՆԳ նախարար Ալեքսանդր Ճիկաիձեն, պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան եւ ֆինանսների նախարար Նոդար Խադուրին, արտասահմանում գտնվելու պատճառով բացակայում էին:

Նիստի օրակարգում Աբխազիայի իրավիճակի հարցն էր: Մասնավորապես, խոսքը վերաբերում էր բռնազավթված Աբխազիայի եւ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԸՆԴԳԾՎԵԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԻ ԲԱԺԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերի 27-ին Փարիզում, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ներկայությամբ, անցկացվեց Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներ Սերժ Սարգսյանի ու Իլհամ Ալիեւի հանդիպումը:

Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներ Սերժ Սարգսյանի ու Իլհամ Ալիեւի հետ հոկտեմբերի 27-ին Փարիզում տեղի ունեցած բանակցությունների ժամանակ հայտնել է Ֆրանսիայի հավատարմությունը՝ շարունակելու միջնորդի դերը Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը հասնելու գործում:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԱԴԻՐԸ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԵՑ ԵՐԿԱՄՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հոկտեմբերի 27-ին լրացավ 2012 թվականի խորհրդարանական ընտրությունների արդյունքներով «Վրացական երազանք» կոալիցիայի կողմից երկրի կառավարման վահանակների տնօրինման երկու տարին:

Տարելիցի կապակցությամբ, գործադիր իշխանությունը Թբիլիսիի «Ռեդիսոն» հյուրանոցում անցկացրեց կառավարության գործունեության երկամյա գործունեության արդյունքների շնորհանդեսը: Կառավարության անդամների ներկայությամբ անցկացված շնորհանդեսին կատարած աշխատանքի արդյունքների հաշվետվությամբ հանդես եկավ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ԳԻՏԱԿՑՈՒՄ Է ԻՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

«Վրացական երազանք» կառավարող կոալիցիան գիտակցում է իր պատասխանատվությունը ժողովրդի առջեւ, որը երկու տարի առաջ վստահություն հայտնեց նրան: Այդ մասին հոկտեմբերի 27-ին, կառավարության երկամյա աշխատանքի արդյունքների շնորհանդեսին, հայտարարեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

«2012 թվականին ես տեսա մի ժողովուրդ, որը միավորվեց մեր երկրի փրկության համար: Մենք ժողովրդին միավորեցինք ժողովրդավարական արժեքների շուրջ, Վրաստանի ժողովուրդն ընտրեց առանց վախի կյանքը եւ վերջնականապես ոչ ասաց բռնությանը: Մենք՝ «Վրացական երազանք» կոալիցիան, գիտակցում ենք այն վստահության հետ կապված պատասխանատվությունը, որը դուք հայտնեցիք մեզ»,- ասաց Ղարիբաշվիլին՝ ներկայացնելով կառավարության երկու տարվա գործունեության վերաբերյալ հաշվետվությունը:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

«ԹԲԻԼԻՍՈԲԱ-2014»

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՈՆ

Հոկտեմբերի 25-26-ին Վրաստանի մայրաքաղաքը տոնեց ավանդական «Թբիլիսոբան»: 35-ամյա պատմություն ունեցող այդ տոնին մայրաքաղաքը ներկայացնում է ոչ միայն քաղաքի, այլեւ երկրի տարածաշրջանների ձեռքբերումները, Վրաստանի ողջ բնակչության նվաճումները: Այդ առումով բացառություն չկազմեց նաեւ 2014 թվականի «Թբիլիսոբան»:

«Թբիլիսոբա- 2014»-ը մեկնարկեց Թբիլիսիի սակրեբուլոյի վերանորոգված շենքի բացմամբ: Պատմական նորացված շենքի բացման արարողությանը մասնակից Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին տոնի առթիվ շնորհավորեց բոլոր թբիլիսցիներին եւ քաղաքի հյուրերին:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՎԵՏՈՅԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԱՐՑՆ Է

Հոկտեմբերի 30-ին Վրաստանի խորհրդարանը, դյուրացված կարգով, մեկ ընթերցմամբ քննարկեց «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Վրաստանի օրենքում փոփոխություններ կատարելու կապակցությամբ» օրինանախագիծը:

Օրինանախագծի համաձայն, անձնական տվյալների հասանելիության հարցը հետաձգվում էր մինչեւ 2015 թվականի փետրվարի 28-ը, հետեւաբար, մինչեւ 2015 թվականի փետրվարի 28-ը պահպանվում են ներքին գործերի նախարարության օպերատիվ-տեխնիկական դեպարտամենտի մինչ այդ գործող իրավասությունները:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԹԲԻԼԻՍԻ-ԵՐԵՎԱՆ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐԱՑՎՈՒՄ Է

Ինչպես արդեն հաղորդել ենք, Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիայի հրավերով, Երեւանի քաղաքապետի տեղակալ Դավիթ Օհանյանի գլխավորած պատվիրակությունը հոկտեմբերի 24-27-ը Վրաստանի մայրաքաղաքում մասնակցեց քաղաքի օրվան նվիրված «Թբիլիսոբա»-յի տոնակատարություններին:

Պատվիրակության կազմում էին քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Սերգեյ Մակարյանը, Աջափնյակ վարչական շրջանի ղեկավար Արտավազդ Սարգսյանը, արտաքին կապերի վարչության արտաքին հարաբերությունների բաժնի պետ Հարություն Հակոբյանը:

Այցի շրջանակում, Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիայի հետ հանդիպմանը, Երեւանի քաղաքապետ Տարոն Մար-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՔՆՆԱՐԿՎԵԾԻՆ ԵՐԿԿՈՂՄ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՀԱՐՑԵՐ

ԿԱՅԱՑԱՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԵՏՆԱԽԱՐԱՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հոկտեմբերի 24-ին Վրաստանի սփյուռքի հարցերով պետնախարար Գելա Դումբաձեն հանդիպում ունեցավ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանի հետ:

Հանդիպմանը քննարկվեցին երկկողմ հետաքրքրություններ ներկայացնող հարցեր, անդրադարձ կատարվեց վրացական եւ հայկական սփյուռքի հիմնախնդիրներին:

Հանդիպմանը Վրաստանի սփյուռքի պետնախարարությունն եւ Վրաստանում Հայաստանի դեսպանության միջեւ պայմանավորվածություն ձեռք բերվեց փոխգործակցության նոր հեռանկարների վերաբերյալ:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԳՐԱՆՑՎԵԼ Է ԱՐՏԱՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿՐՈՒՄՆԵՐԻ ՃԱՎԱԼՆԵՐԻ ԱՆՆԱԽԱԴԵՊ ԱՃ»

International INVESTMENT FORUM
Tbilisi, Georgia, October 29-30, 2014

Հոկտեմբերի 29-ին, Թբիլիսիի «Ռեդիսոն» հյուրանոցում, անցկացվեց «Վրաստանը՝ տարածաշրջանային կենտրոն եւ Եվրոպայի ու Ասիայի դուռ» միջազգային ներդրումային խորհրդաժողովը:

Խորհրդաժողովի աշխատանքին մասնակցում են Վրաստանի էկոնոմիկայի նախարար, փոխվարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, փոխնախարար Քեթեւան Բոճորիշվիլին, միջազգային կազմակերպությունների, դիվանագիտական ներկայացուցչությունների, կառավարական կառույցների ու Վրաստանի գործարար շրջանների ներկայացուցիչներ, տարբեր երկրներից ժամանած շուրջ 300 պատվի-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԱԲԽԱԶԻԱՅՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆ ԷՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ռուսաստանի միջեւ «Դաշնակցության եւ ինտեգրման մասին» պայմանագրի հնարավոր ձեւակերպմանը: Նշենք, որ վերոնշյալ պայմանագիրը նախատեսում է աբխազա-ռուսական միացյալ զորամիավորումների ստեղծում, պաշտպանական ընդհանուր ենթակառույցների հիմնում եւ համատեղ գործողությունների իրականացում: Բացի այդ, պայմանագիրը նախատեսում է նաեւ սոցիալական եւ տնտեսական, մշակութային ու հումանիտար միասնական տարածքի ստեղծում:

Ազգային անվտանգության խորհրդի նիստի ավարտից հետո, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեցին, որ նախագահը, վարչապետն ու Վրաստանի խորհրդարանը պայմանավորվել են համակարգել Աբխազիայի նկատմամբ ռուսական բռնազավթիչ քայլերի դեմ ուղղված իրենց գործողությունները:

«Մենք կաշխատենք միասին, որպեսզի թույլ չտանք Մոսկվայի եւ Սուխումիի միջեւ դաշնակցային ու ինտեգրման պայմանագրի ստորագրումը, քանզի դա մեր երկրի տարածքի որոշակի հատվածի անմիջական բռնազավթումն է»,- հայտարարեց նախագահը եւ հավելեց, որ կանխագծվել են այդ ուղղությամբ կատարվելիք կոնկրետ քայլերը:

Իր հերթին, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին ընդգծեց անցկացված նիստի նշանակությունը եւ նշեց. «Մեր միջեւ տարաձայնություններ չկան, եւ մենք միասին կաշխատենք հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ»:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԳՐԱՆՑՎԵԼ Է ԱՐՏԱՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿՐՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԱՆՆԱԽԱԴԵՊ ԱՃ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րակ:

Խորհրդաժողովը բացեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

Նրա խոսքերով, Վրաստանի առաջընթացի կարեւորագույն բաղադրիչը նրա եվրոպական եւ եվրաատլանտյան ինտեգրումն է: Վարչապետը նշեց, որ ազատ առեւտրի համընդհանուր եւ ծավալուն գոտին իր նշանակալի ավանդն է ներդնում Վրաստանի տնտեսական աճի գործում, համաշխարհային շուկային ինտեգրումը նոր հեռանկարներ են բացում Վրաստանի, ինչպես նաեւ այն գործարարների համար, ովքեր Վրաստանում զբաղված են գործարարությամբ:

Վարչապետը նշեց, որ 2014 թվականի առաջին կիսամյակում Վրաստան-Եվրամիություն ապրանքաշրջանառությունն աճել է 15 տոկոսով: «Գրանցվել է արտահանումների եւ ներկրումների ծավալների աննախադեպ աճ: Նախնական տվյալներով, արտահանումն ավելացել է 41, իսկ ներկրումը՝ 9 տոկոսով»,- հայտարարեց վարչապետը:

Իրակլի Ղարիբաշվիլու խոսքերով, կառավարությունը սահմանել է որպես տարածաշրջանային կենտրոնի՝ Վրաստանի դերի ուժեղացման առաջնահերթային ուղղությունները: «Դրանք են՝ տրանսպորտը, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, էներգետիկան եւ զբոսաշրջությունը: Ասիայից՝ Եվրոպա եւ հակառակը բեռների փոխադրումը Վրաստանի տարածքով շատ ավելի դյուրին է ու էժան, իսկ առաջիկայում դա շատ ավելի լավ կլինի»,- հայտարարեց վարչապետը:

Հոկտեմբերի 30-ին խորհրդաժողովն ավարտեց աշխատանքը:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հիշեցնենք, որ խորհրդարանը դեռեւս օգոստոսին ընդունել էր գաղտնի լսումների վերաբերյալ օրենսդրական ծրարը: Բաց էր մնացել միայն այն հարցը, թե ում տնօրինության տակ է անցնելու հաղորդակցական ընկերությունների կողմից իրականացվող հաղորդակցական տեղեկատվության մատչելիության տեխնիկական հնարավորությունը, այսպես կոչված, բանալին: Բաց էր մնացել նաեւ, թե որտեղ, ինչ ժամկետով ու ծավալով պետք է պահպանվի հաղորդակցական նույնականացման տեղեկատվությունը:

Օրինանախագծի ընդունման հաջորդ օրը՝ հոկտեմբերի 31-ին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հրաժարվեց ստորագրությամբ վավերացնել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքում կատարվելիք փոփոխությունները: Իսկ դա նշանակում է, որ ՆԳՆ օպերատիվ-տեխնիկական դեպարտամենտը զրկվում է գաղտնի լսում-տեսագրումների, ինչպես նաեւ հաղորդակցական նույնականացման տեղեկատվության պահպանման օրինական իրավունքից եւ ուժի մեջ է մնում խորհրդարանի կողմից օգոստոսին ընդունած նորմը, ըստ որի, ՆԳՆ դեպարտամենտի վերոնշյալ իրավասությունները պահպանվում են մինչեւ 2014 թվականի նոյեմբերի մեկը:

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքում կատարած փոփոխությունների ծրարի վերաբերյալ խորհրդարանին առաքած իր դիտողություններում Վրաստանի նախագահը նշում է, որ այսպես կոչված բանալու հարցի կարգավորման «բանական ժամկետը» համարում է մինչեւ 2014 թվականի դեկտեմբերի մեկը:

«Նախագահը օգտագործեց իր սահմանադրական իրավունքը, օրինանախագծի վրա վետո դրեց եւ այն իր դիտողություններով վերադարձրեց խորհրդարանին: Մանրամասների վրա կանգ չառնելով՝ նշեմ, որ նախագահը առաջարկում է այն ժամկետը, որը սպառվում է վաղը (նոյեմբերի մեկին), երկարաձգվի մինչեւ դեկտեմբերի մեկը եւ ոչ թե փետրվարի 28-ը»,- հայտարարեց խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին եւ հավելեց. «Մենք անհապաղ ձեռնամուխ կլինենք հարցի քննարկմանը եւ որոշում կընդունենք նախագահի դիտողությունների ընդունման կամ նախագահական վետոյի հաղթահարման վերաբերյալ»:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԹԲԻԼԻՍԻ-ԵՐԵՎԱՆ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐԱՑՎՈՒՄ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

գարյանի անունից շնորհավորելով քաղաքի օրվա կապակցությամբ եւ փոխանցելով քաղաքին ու բնակիչներին ուղղված բարեմաղթանքները, Դավիթ Օհանյանը շնորհակալություն հայտնեց հրավերի համար:

Դավիթ Նարմանիան իր հերթին շնորհակալություն հայտնեց հրավերն ընդունելու համար: Հանդիպմանը կողմերը քննարկեցին նաեւ «Թբիլիսիի եւ Երեւանի միջեւ համագործակցության մասին» համաձայնագրի վերակնքման հարցը, ինչպես նաեւ անդրադարձան Երեւանի պուրակում վրացահայկական բարեկամության խաչքարի տեղադրման հարցին:

Թբիլիսիի օրվան նվիրված միջոցառումներին մասնակցելու նպատակով Վրաստանի մայրաքաղաք կատարած այցի ընթացքում, երեւանյան պատվիրակությունը Սուրբ էջմիածին եկեղեցում մասնակցեց Սուրբ պատարագի, այնուհետ այցելեց եկեղեցուն կից գործող կրթամշակութային կենտրոն, ծանոթացավ ստեղծված պայմաններին ու հետաքրքրվեց երեխաների առօրյայի կազմակերպմամբ:

Պատվիրակությունն այցելեց նաեւ Թբիլիսիի Խոջիվանքի պանթեոն, հարգանքի տուրք մատուցեց այստեղ հանգչող հայ մեծերի հիշատակին:

Երեւանի քաղաքապետարանի պատվիրակությունը հյուրընկալվեց Վրաստանում Հայաստանի դեսպան Յուրի Վարդանյանին:

ԴԱՏԱԿԱՆ

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՎԱՏՆԵԼՈՒ ՄԵՂԱԴՐԱՆՔՈՎ

Վրաստանի գլխավոր դատախազության հայտարարության համաձայն, հոկտեմբերի 28-ին ձերբակալվել են Վրաստանի պաշտպանության նախարարության մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք մեղադրվում են 4 մլն 102 հազար լարիի (շուրջ 2,3 մլն ԱՄՆ դոլար) չափով պետական միջոցներ վատնելու մեջ:

«Թբիլիսիի քաղաքային դատարանի որոշման հիման վրա, Գլխավոր դատախազության կողմից ձերբակալվել են պաշտպանության նախարարության պետական գնումների դեպարտամենտի նախկին ղեկավար Գիզո Ղլոնտին, Վրաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների դեպարտամենտի պետ Նուգզար Կաիշաուրին, պաշտպանության նախարարության պետական գնումների դեպարտամենտի վարչության պետ Գիորգի Լոբժանիձեն, պետական գնումների դեպարտամենտի գլխավոր մասնագետ Արչիլ Ալավիձեն եւ Վրաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի կապի ու տեղեկատվական տեխնոլոգիաների դեպարտամենտի վարչության ղեկավար Դավիթ Ծիպուրիան»,- ասված է հաղորդագրության մեջ:

Ըստ դատախազության տվյալների, բարձրաստիճան պաշտոնյաները մեղադրվում են պաշտպանության նախարարության հայտամրցույթի արդյունքները կեղծելու եւ պետական միջոցները հօգուտ Silknet հաղորդակցական ընկերության վատնելու մեջ:

«Խոշոր չափով բյուջետային միջոցներ վատնելու համար, բոլոր ձերբակալվածներին մեղադրանքներ կներկայացվեն 48 ժամվա ընթացքում»,- նշել է Գլխավոր դատախազությունը:



ՈՒԿՐԱԻՆԱ

ԿԱՅԱՑԱՆ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոկտեմբերի 26-ին Ուկրաինայում անցկացվեցին Գերագույն ռադայի արտահերթ ընտրություններ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով, արտահերթ ընտրություններում առաջատարներն են Արսենի Յացենյուկի «Ժողովրդական ճակատ» կուսակցությունը եւ «Պյոտր Պորոշենկոյի բլոկը»:

Հրապարակված տվյալներով, Արսենի Յացենյուկի «Ժողովրդական ճակատը» արժանացել է ընտրողների 21,71 %-ի աջակցությանը, «Պյոտր Պորոշենկոյի բլոկի» օգտին քվեարկել է ընտրողների 21,62 %-ը:

Հինգ տոկոսի արգելագիծն հաղթահարել են նաեւ Լվովի քաղաքապետ Անդրեյ Սադովոյի «Սամոպոմոշչ»-ը՝ 10.49 %, Յուրի Բոյկոյի «Ընդդիմադիր բլոկը»՝ 9,57 %, Օլեգ Լյաշկոյի «Ծայրահեղական կուսակցություն»-ը՝ 7,69 % եւ Յուլյա Տիմոշենկոյի «Բատկիվշչինա»-ն՝ 5,90 %:

Նոր կառավարության կազմավորման համար պատգամավորական մանդատի արժանացած քաղաքական միավորումների միջեւ անց են կացվում խորհրդատվություններ:

ԵԽ

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՄՆԱՑ ԱՆՓՈՓՈԽ

Եվրոպայի խորհրդի գագաթաժողովն անփոփոխ է թողել Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների կիրառման մասին որոշումը:

ԵԽ-ն նաեւ Ռուսաստանին կոչ է արել նպաստել Ուկրաինայում հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին, իսկ Լուգանսկի ու Դոնեցկի ինքնահռչակ հանրապետությունների ղեկավարություններին՝ հրաժարվել սեփական ընտրություններն անցկացնելուց եւ անցկացնել Ուկրաինայի օրենսդրությանը համապատասխան ընտրություններ:

ԵԽ գագաթաժողովը կոչ է արել նաեւ դադարեցնել կրակը եւ կյանքի կոչել Մինսկյան պայմանավորվածությունները:

ԲՐԱԶԻԼԻԱ

ԴԻԼՄԱ ՌՈՒՍԵՖԸ ՎԵՐԸՆՏՐՎԵՑ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀ

Բրազիլիայում կայացած նախագահական ընտրությունների երկրորդ փուլում հաղթել է պետության գործող ղեկավար Դիլմա Ռուսեֆը: 99 տոկոս քվեաթերթիկների հաշվումից հետո, պարզվեց, որ նա հավաքել է ձայների 51,54 տոկոսը: Սոցիալ-դեմոկրատներին ներկայացնող նրա մրցակցի՝ նախկին սենատոր Աեսիու Նեւիսի օգտին քվեարկել է ընտրողների 48,46 տոկոսը:

Ընտրությունների առաջին փուլը տեղի է ունեցել հոկտեմբերի 5-ին: Այն ժամանակ Ռուսեֆը, որը ներկայացնում էր Աշխատավորների կուսակցությունը, հավաքել էր ձայների 41,59 տոկոսը, Նեւիսը՝ 33,55 տոկոսը:

Բրազիլիայի սահմանադրության համաձայն, Ռուսեֆը նախագահի պաշտոնում կմնա եւս չորս տարի:

ՌԴ

ՎԵՐԱԴԱՐՁ՝ ՁՄԵՌԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ

Ռուսաստանը, եռամյա դադարից հետո, վերադարձել է ձմեռային ժամանակի կիրառմանը. ՌԴ-ի շրջանների մեծ մասում ժամացույցի սլաքները մեկ ժամ հետ են տարվել: Արդյունքում, հանրապետությունում սահմանվել է տասնմեկ ժամային գոտի, որոնցից ամենամեծը մոսկովյանն է, որի մեջ են մտնում նաեւ այս տարի ՌԴ-ին միացած Ղրիմն ու Սեւաստոպոլը:

Հիշեցնենք, որ անցումը ձմեռային ժամանակին չեղյալ էր հայտարարվել 2011թ. աշնանը:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԱՅՑ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻՆ ՂՐՂԶՍՏԱՆՈՒՄ

Ճապոնիայում պաշտոնական այցի ավարտից հետո Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին այցելեց Ղրղզստան:

Այցի շրջանակներում, Վրաստանի ղեկավարը հանդիպում ունեցավ Ղրղզստանի նախագահ Ասլամբեկ Ատամբաեւի հետ: Հանդիպմանը քննարկվեցին երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր, մասնավորապես՝ երկու երկրների միջեւ առեւտրա-տնտեսական կապերի խորացման հեռանկարները:

Նշվեց, որ համագործակցության մակարդակը չի համապատասխանում կողմերի առկա ներուժին, ինչը հանգեցնում է տարբեր ոլորտներում համագործակցության ներկա մակարդակի վերանայման անհրաժեշտությունը:

Կողմերը քննարկեցին նաեւ Աբխազիայում եւ Ուկրաինայում ստեղծված իրավիճակը:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԱՎԱՐՏՎԵՑ ԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ

Ավարտվեց Վրաստանի եւ Եվրամիության միջեւ այցեգրային պայմանակարգի ազատականացման առաջին փուլը: Վրաստանի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեի հայտարարությամբ, կողմերը պատրաստ են անցնել հաջորդ փուլին:

Նշենք, որ հոկտեմբերի 28-ին Եվրահանձնաժողովը հրապարակեց Վրաստանի եւ Եվրամիության միջեւ այցեգրային պայմանակարգի ազատականացման գործողությունների ծրագիրը, որտեղ նշված է, որ Վրաստանը կատարել է այցեգրային երկխոսության պահանջների առաջին փուլը:

«Այցեգրերի ազատականացման գործողությունների ծրագրի առաջին՝ օրենսդրական փուլը, կառավարության համատեղ ջանքերով ավարտվել է, եւ մենք պատրաստ եք անցնելու հաջորդ փուլ: Սա հաստատել է նաեւ Եվրահանձնաժողովը, որը բարձր գնահատական է տվել Վրաստանի կողմից կատարած աշխատանքին: Սա նշանակալի քայլ է այցեգրերի ազատականացման ուղղությամբ: Այն կհանգեցնի Եվրամիության եւ Վրաստանի միջեւ անայցեգրային պայմանակարգի հաստատմանը»,- հայտարարեց Մայա Փանջիկիձեն:

Հիշեցնենք, որ Եվրամիության հետ Վրաստանի Ասոցիացման համաձայնագիրը, որի բաղադրիչներից մեկը համընդհանուր եւ ծավալուն ազատ առեւտրի պայմանագիրն է, Բրյուսելում ստորագրվել էր հունիսի 27-ին: Համաձայնագրի կետերի մեծ մասը ուժի մեջ մտավ սեպտեմբերի մեկին:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ՄՇԱԿՎԵԼ Է ԵՐԿՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՌԱՄՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇՐԱԳԻՐ

Վրաստանի էկոնոմիկայի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլու հայտարարությամբ, կառավարությունը մշակել է երկրի արդիականացման եռամյա ծրագիր:

«Վերջին երկու տարիները շատ ինտենսիվ էին, եւ կարծում եմ՝ արդյունքները գոհացուցիչ են: Թեկուզ վերցնենք արտահանումը, այն ավելացել է 27 տոկոսով, Եվրամիության հետ ստորագրվել է Ասոցիացման համաձայնագիրը: Մենք մշակել ենք եռամյա ծրագիր՝ ուղղված երկրի արդիականացմանը: Նշենք, որ ենթակառույցների առումով իրականացվել են բազում նախագծեր, արդյունավետ է գործում նաեւ «Արտադրիր Վրաստանում» նախագիծը, արդեն ֆինանսավորվել է 25 արտադրություն: Հաջող են աշխատում մի շարք գյուղատնտեսական նախագծերը, ինչպես նաեւ միկրոարտադրությունների ֆինանսավորման ծրագրերը: Հարկ է նշել նաեւ լեռնադահուկային ենթակառույցների զարգացմանն ուղղված պետական ֆինանսավորման առաջընթացը»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Նրա խոսքերով, զբոսաշրջության ոլորտում կատարած ներդրումների արդյունքում զգալիորեն ավելացել է զբոսաշրջիկների թիվը, մեծացել է նաեւ ներդրողների հետաքրքրությունը:

Նախարարի խոսքերով, գլխավոր նվաճումներից մեկը պետության ճնշումից գործարարության ազատումն է:

2,4 ՄԻԼԻԱՐԴ ԼԱՐԻ՝ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Դավիթ Շավլիաշվիլու հայտարարությամբ, վերջին երկու տարվա ընթացքում ենթակառույցային նախագծերի իրականացման համար նեդրվել է 2,4 միլիարդ լարի:

«Վերականգնման աշխատանքներ են իրականացվել ընդհանուր առմամբ 6000 կմ ճանապարհների վրա, կառուցվել եւ վերականգնվել է շուրջ 100 կամուրջ. ավելի քան 50 մունիցիպալիտետներում կարգավորվել է խմելու ջրի հիմնախնդիրը: Միջազգային չափորոշիչներին են համապատասխանեցվել մինչ այդ անուշադրության մատնված մոտ 20 աղբանոց: Բռնագաղթվածների համար կառուցվել են մի քանի մասնաշենքեր, շուրջ 2000 ընտանիք արդեն նշել է բնակարանամուտ»,- հայտարարեց Դավիթ Շավլիաշվիլին:

ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏՆԵՑԻՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ

Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան հոկտեմբերի 28-29-ին աշխատանքային այցով եղավ Ֆրանսիայում ու Գերմանիայում:

Փարիզ կատարած աշխատանքային այցի շրջանակներում, Իրակլի Ալասանիան հանդիպում ունեցավ Ֆրանսիայի պաշտոնակից Ժան Իվ լե Դրիանի հետ եւ քննարկեց ռազմական ոլորտում երկկողմ համագործակցության խորացման հարցերը, ՆԱՏՕ-ի՝ Ուելսի գագաթաժողովի արդյունքները եւ դաշինքին Վրաստանի անդամակցության հեռանկարները:

Ժան Իվ լե Դրիանը Ֆրանսիայի աջակցությունն հայտնեց եվրատլանտյան կառույցներին, ՆԱՏՕ-ին Վրաստանի ինտեգրացմանը:

Ֆրանսիայի պաշտպանության նախարարը վրացական կողմին նաեւ շնորհակալություն հայտնեց Կենտրոնաֆրիկյան Հանրապետությունում (ԿԱՀ) իրականացվող ԵՄ-ի առաքելությանը վրացի զինվորականների մասնակցության համար:

Հոկտեմբերի 29-ին Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան Ֆրանսիայից ուղեւորվեց Գերմանիա:

Այցի շրջանակներում, Իրակլի Ալասանիան հանդիպում ունեցավ Գերմանիայի իր պաշտոնակցի՝ Ուրսուլա ֆոն դեր Լայենի հետ: Կողմերը քննարկեցին Վրաստանի եւ Գերմանիայի միջեւ ռազմական համագործակցության հարցերը, ինչպես նաեւ ապագայի ծրագրերը:

Այցի ավարտին Վրաստանի պաշտպանության նախարարը «Տարածաշրջանային անվտանգության մարտահրավերները եւ ՆԱՏՕ-ի՝ Ուելսի գագաթաժողովի որոշումների կարեւորությունը» թեմայի շուրջ զեկույցով հանդես եկավ Կյորբերի հիմնադրամում (KΦrber-Stiftung):



ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԿԿԱՅԱՆԱ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-ԻՆ

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ենս Ստոլտենբերգը եւ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին նոյեմբերի 17-ին կհանդիպեն Բրյուսելում: Այդ մասին հայտարարել է Վրաստանի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեն:

«Հանդիպումը կկայանա նոյեմբերի 17-ին, այն ժամանակ, երբ վրացական պատվիրակությունը՝ վարչապետի ղեկավարությամբ, կմեկնի Բրյուսել՝ մասնակցելու «ՎրաստանԵՄ» ասոցիացված խորհրդի առաջին նիստին»,- հայտնեց նախարարը:

Հիշեցնենք, որ ՆԱՏՕ-ի՝ Ուելսի գագաթաժողովին հաստատվել է միջոցառումների փաթեթ, որոնք աջակցում են դաշինքին անդամակցելու Վրաստանի ձգտմանը: Փաթեթի շրջանակներում, նախատեսված է Վրաստանում բացել վարժական կենտրոն, որտեղ պատրաստություն կանցնեն դաշինքի եւ ՆԱՏՕ-ի գործընկեր երկրների զինծառայողները:

ԿԵՆՍԱԿԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԸ՝ 89 ԱՄՆ ԴՈԼԱՐ

Վրաստանի վիճակագրական ծառայության տվյալներով, 2014 թվականի հոկտեմբերի մեկի դրությամբ, Վրաստանում աշխատունակ տղամարդու համար կենսական նվազագույնը կազմում է 155,8 լարի (89 ԱՄՆ դոլար), միջին սպառողի համար այն հասնում է 138,4 լարիի (79,1 դոլար), միջին ընտանիքի համար՝ 261,3 լարի (149,3 դոլար):

Նշենք, որ, ընթացիկ տարվա սեպտեմբերի մեկի տվյալներով, աշխատունակ տղամարդու կենսական նվազագույնը 150,6 լարի (86,1 դոլար) էր, միջին սպառողինը՝ 133,4 լարի (76,2 դոլար), միջին ընտանիքինը՝ 252,6 լարի (144,3 դոլար) էր:

ՆՎԱԶԵՑՎՈՒՄ Է ԳԱԶ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՍԱԿԱԳԻՆԸ

Էներգետիկայի եւ ջրամատակարարման ազգային հանձնաժողովը քննարկել է գազ անցկացնելու սակագնի հարցը: Ընդունված որոշման համաձայն, ընդհանուր գազամուղից բնակարան գազը քաշելու սակագինը 600 լարիից նվազեցվել է մինչեւ 400 լարին: Քաղաքացիներին վերապահվում է նաեւ 16 ամսվա ընթացքում սակագինը ամսական 25 լարիով մարելու հնարավորություն:

Նոր սակագինն ուժի մեջ կմտնի ընթացիկ տարվա նոյեմբերի մեկից: Եթե 30 օրվա ընթացքում ընկերությունը չի իրականացնում աբոնենտի միացումն ընդհանուր ցանցին, ապա սակագինը 400-ից նվազեցվում է մինչեւ 200 լարին:

ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԹԻՎԸ ՆՎԱԶԵԼ Է 12, ՏՈԿՈՍՈՎ

Վրաստանի ներքին գործերի նախարարությունը հրապարակել է իրավախախտումների վիճակագրությունը: ՆԳ նախարարության տեղեկատվությամբ, 2014 թվականի սեպտեմբերին երկրում գրանցվել է 2426 իրավախախտում, որից 1619-ը բացահայտվել է: Հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 66,74 տոկոս:

Նախարարության հավաստմամբ, անցյալ տարվա համապատասխան ժամանակամիջոցի համեմատությամբ, իրավախախտումների թիվը նվազել է 12,45 տոկոսով:

Նախարարության տեղեկատվությամբ, 2014 թվականի հունվար-սեպտեմբերին Վրաստանում գրանցվել է 19787 իրավախախտում՝ 12529 հանցագործությունները բացահայտվել են (բացահայտման ցուցանիշը կազմել է 63,32 տոկոս): Անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, իրավախախտումների թվի նվազումը կազմել է 16,55 տոկոս:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԱԴԻՐԸ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԵՑ ԵՐԿԱՄՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՀՐԱՏԱՊ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, ներկայացնելով կառավարության երկամյա աշխատանքի վերաբերյալ հաշվետվությունը, հայտարարեց, որ սոցիալական այն վիճակը, որը բաժին էր ընկել իր կառավարությանը, «գերազանցում է բոլոր սպասումները»:

«Ես շրջել եմ ողջ Վրաստանում եւ գիտեմ՝ ինչպես է ապրում մեր ժողովուրդը: Մենք ավելի քան 2 միլիոն կարիքավորներ ունենք: Շատ գյուղերում այսօր էլ կան խնդիրներ՝ կապված ջրի, գազի, ճանապարհների հետ: 28 գյուղ ընդհանրապես էլեկտրաէներգիա չունի: Իսկ ամենատագնապալին այն է, որ այն իշխանությունների ձեռքում, որոնք հպարտանում էին շինարարությամբ, մարդիկ մահանում էին՝ զրկված լինելով դեղորայքից ու բժիշկներից: Ահա այդպիսի երկիր ենք մենք ստացել»,- ընդգծեց վարչապետը:

Վրաստանի վարչապետի հավաստմամբ, պետական քաղաքականության գլխավոր առաջնահերթությունը մարդն է ու նրա առողջությունը: «Դա ամենահիմնախնդրային ոլորտն է, որտեղ մենք վիթխարի ջանքեր ներդրեցինք, եւ արդյունքներն էլ առկա են: Առողջապահության եւ սոցիալական ապահովման բյուջեն ավելացել է շուրջ մեկ միլիարդ լարիով:

Մենք իրականացրինք առողջապահական այնպիսի նախագիծ, որի նմանը Վրաստանում երբեք չի եղել: Այսօր համընդհանուր առողջապահության ծրագրից օգտվում է 2781 հազար մարդ: Դա նշանակում է, որ Վրաստանի բնակչության կեսը, որին առողջապահությունը մատչելի չէր, ներկայումս օգտվում է ապահովագրությունից: Մենք հասանք նրան, որ մարդուն, եթե անհրաժեշտ է վիրահատություն, ապա այն արվում է, եւ դրա համար վճարում է պետությունը»,- հայտարարեց վարչապետը:

Իրակլի Ղարիբաշվիլին անդրադարձավ նաեւ բարձրալեռ շրջաններում ծնելիության մակարդակի նվազեցման հարցին՝ նշելով որ հիմնախնդրի կարգավորման համար պետությունը պետք է ցուցաբերի դրամական օգնություն: «Պակաս ծնելիության մակարդակով տարածաշրջաններում յուրաքանչյուր երրորդ եւ հաջորդ երեխայի համար պետք է հատկացվի դրամական նպաստ: Լեռնային շրջաններում դա կկազմի 200 լարի, իսկ ցածրավայրերում՝ յուրաքանչյուր երեխայի հաշվով 150 լարի: Կարծում եմ, դա յուրատեսակ ազդակ կհանդիսանա երիտասարդ ընտանիքների համար»,- ընդգծեց վարչապետը:

Խոսելով մահացության մակարդակի մասին՝ վարչապետը, հենվելով վիճակագրական տվյալների վրա, հայտարարեց, որ համընդհանուր առողջապահության ծրագրի գործարկմամբ վերջին քսան տարիների ընթացքում առաջին անգամ նվազել է մահացության մակարդակը:

ԿՈԱԼԻՑԻԱՆ ԿԱՏԱՐՈՒՄ Է ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու խոսքերով, կառավարությունը կատարեց «Վրացական երազանք» կոալիցիայի՝ կենսաթոշակը կենսական նվազագույնին հավասարեցնելու մասին նախընտրական խոստումը: «Մենք ավելացրինք բոլոր կատիգորիաների կենսաթոշակառուների եւ սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց կենսաթոշակները: Կենսական նվազագույնին կենսաթոշակները հավասարեցնելու մասին մեր նախընտրական խոստումը կատարվել է: Վրաստանում կենսական նվազագույնը ներկայումս 148 լարի է, եւ մենք կենսաթոշակը դարձրինք 150 լարի»,- հայտարարեց վարչապետը:

Նրա խոսքերով, կառավարությունը հնարավորն անում է ընտանիքների կենսամակարդակի առավելագույն բարձրացման համար. «Արդեն երկրորդ տարին է, ինչ աշակերտները անվճար ստանում են դասագրքերը, եւ դա 60 տոկոսով կրճատում է ընտանիքների ծախսերը միջնակարգ կրթության ստացման համար: Աշակերտների ծնողները միայն այդ տեսանկյունից, տարեկան տնտեսում է 75 միլիոն լարի: Բացի այդ, 1065 դպրոցների 53 հազար երեխաներին սպասարկում է դպրոցական տրանսպորտը: Մենք կառուցում ենք նոր դպրոցներ: Արդեն կառուցվել է 9, շինարարության փուլում են 8 եւ վերանորոգման աշխատանքներ են իրականացվել մոտ 1000 դպրոցում»,- հայտարարեց վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ՝ ԳՅՈՒՂԵՐԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ներկայացնելով գործադիր իշխանության երկամյա գործունեության արդյունքները՝ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ երկրի բոլոր տարածաշրջաններն ունեն գյուղերը ոտքի բարձրացնելու ռեսուրսներ: Նրա խոսքերով, նոր կառավարությունը գործունեության առաջին իսկ օրերից, դեռեւս Բիձինա Իվանիշվիլու գլխավորությամբ, կոնկրետ քայլեր ձեռնարկեց այդ ուղղությամբ:

«Վրաստանի բոլոր երկրամասերն ունեն ռեսուրսներ, որ սեփական ուժերով բարձրացնեն գյուղերը: Ավելին, յուրաքանչյուր երկրամասում ռեսուրսները շատ ավելի են, քան պահանջվում է տեղական շուկայի համար: Իսկ դա նշանակում է, որ Վրաստանը կարող է արտահանել իր արտադրանքը, եւ մեր կառավարության քաղաքականությունը կայանում է նրանում, որ տեղական բարձրորակ արտադրանքով առավելագույնս փոխարինի ներկրումը եւ զարգացնի արտահանումը: Մեր կառավարության իրատեսական, հետեւողական քաղաքականության արդյունքում, մեր գյուղացիներն իրենց մթերքներն արդեն արտահանում են ռուսական շուկա, ինչը մեծ օգուտ է բերում: Մեր ծրագրերն ու հեռանկարները շատ ավելի ծավալուն են. Վրաստանի համար բացվել է 500 միլիոնանոց եվրոպական շուկան, եւ մենք հնարավորինս արագ յուրացնելու ենք այդ շուկան»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Անդրադառնալով գյուղատնտեսության ոլորտում իրականացված բարեփոխումներին՝ վարչապետը նշեց. «Մենք ֆերմերներին օգնեցինք գարնանային աշխատանքների ժամանակ. երկու տարվա ընթացքում վերամշակվել էր 420 հազար հեկտար հողատարածք: Ամեն տարի 800 հազար գյուղացի պետությունից օգնություն է ստանում: Դրա վրա ծախսվել է 300 միլիոն լարի: Նման նախադեպ Վրաստանում չի եղել, գյուղը երբեք նման օգնություն չի ստացել: Մենք գյուղացիներին բաժանեցինք 9 միլիոն լարիի սերմանյութ, 107 միլիոն լարիի պարարտանյութ, 48 միլիոն լարիի թունաքիմիկատներ, 54 միլիոն լարիի գյուղատնտեսական գործիքներ: Սկսել է գործել արտոնյալ ագրովարկավորման նախագիծը: 2013 թվականի մարտից տրվել է 492 միլիոն ընդհանուր գումարի 21400 ագրովարկ: Նախագծի շրջանակներում, ֆինանսավորվել է 89 նոր արտադրություն եւ վերազինվել է 521 արտադրամաս: Ինտենսիվորեն աշխատում ենք գյուղը խմելու եւ ոռոգման ջրով ապահովելու ուղղությամբ: Գրեթե բոլոր, շուրջ 3 հազար կիլոմետր երկարության ոռոգման համակարգերում անց են կացվել վերանորոգման աշխատանքներ»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ՝ ՈՒԺԵՂ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին աբխազներին ու օսերին ինքնավարություն եւ եվրոպական հեռանկար է առաջարկել Վրաստանի կազմում:

«Ցանկանում եմ մեկ անգամ եւս դիմել մեր աբխազ եւ օս եղբայրներին. մենք նույն հողի զավակներն ենք, սա մեր տարածքն է, մեզ միավորում է նույն ցավը, եւ մենք պետք է միասին շարունակենք ճանապարհը դեպի ապագա: Ցանկանում եմ օգտվել առիթից եւ մեր աբխազ եղբայրներին շնորհավորել Աբխազական լեզվի օրվա կապակցությամբ, որը նրանք նշում են հոկտեմբերի 27-ին: Վստահ եմ, որ միայն մեզ հետ միասին, միայն եվրոպական հեռանկարներ ունեցող Վրաստանի հետ մեր աբխազ եղբայրները կկարողանան պահպանել իրենց լեզուն ու մշակույթը: Մենք իրոք ցանկանում ենք մեր աբխազ եւ օս եղբայրների հետ միասին ապրել միասնական Վրաստանում... Շատ դժվար է, երբ ցանկանում ես այսպես կոչված անկախ պետություն ստեղծել ուրիշի տարածքում. դա տեղի չի ունենա, բարեկամներ, երբեք տեղի չի ունենա: Դա անհասանելի է, դա ուտոպիական ծրագիր է, ինչին ո՛չ մեր, ո՛չ էլ ապագա սերունդը երբեք չի համակերպվի, որովհետեւ սա մեր հնագույն տարածքն է, որը մեր նախնիները սեփական արյան գնով պահպանել են մեզ համար: Դուք երջանիկ չեք լինի առանց մեզ, մենք երջանիկ չենք լինի առանց ձեզ»,- հայտարարեց Ղարիբաշվիլին:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ

Վրաստանի գյուղատնտեսության նախարարությունը հրապարակել է տվյալներ ոլորտի դրական տեղաշարժերի վերաբերյալ:

Նախնական տվյալներով, 2014 թվականին գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքադաշտերը զգալիորեն ավելացել են եւ կազմել 322,5 հազար հեկտար, ինչը 3,8 տոկոսով գերազանցում է 2013 թվականի եւ 24 տոկոսով՝ 2012 թվականի ցուցանիշը: Հաղորդագրության մեջ նշված է, որ վերոնշյալ տվյալը չի ներառում տարվա երրորդ եռամսյակում իրականացված ցանքսերի տարածքը:

Եգիպտացորենի ցանքատարածությունները զբաղեցրել են 151 հազար հեկտար, 31 տոկոսով ավելի՝ 2012 թվականի համեմատությամբ: Բանջարեղենի եւ կարտոֆիլի տակ դրվել է 46,5 հազար հեկտար (կեսից ավելին զբաղեցնում են կարտոֆիլի ցանքատարածքները):

Զգալիորեն ավելացել է անասունների գլխաքանակը: Նախնական տվյալներով, 2014 թվականի առաջին կիսամյակում, 2013 թվականի նույն ժամանակամիջոցի համեմատությամբ, խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն ավելացել է 6,6 տոկոսով, ոչխարներինն ու այծերինը՝ 10,6 տոկոսով, թռչուններինը՝ 13,6 տոկոսով, կաթի արտադրությունը՝ 4,6 տոկոսով, ձվինը՝ 2,9 տոկոսով:

Ավելացել է նաեւ մեղվաընտանիքների թիվը՝ այն հասել է 399 հազարի, նախորդ տարվանից 85 տոկոսով ավելի:

2014 թվականի առաջին երկու եռամսյակների տվյալներով, գյուղատնտեսության ոլորտում կատարվել է 6,1 միլիոն դոլարի անմիջական ներդրում, ինչը 85 տոկոսով գերազանցում է նախորդ տարվա համապատասխան ժամանակամիջոցի ցուցանիշը:

2013 թվականին, 2012-ի համեմատությամբ, գյուղմթերքների արտահանումն ավելացել է 51 տոկոսով, իսկ 2014 թվականի հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ, աճը կազմել է 23 տոկոս:

ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ՝ ԱԽԱԼՑԻԽԵԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Վրաստանի գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիան Ախալցիխեի մունիցիպալիտետի Ծնիսի գյուղում մասնակցեց սառնարանային նոր տնտեսության բացման արարողությանը:

Միջոցառմանը ներկա էին գյուղատնտեսական նախագծերի կառավարման ազգային գործակալության տնօրեն Մարիանա Մորգոշիան, Սամցխե-Ջավախեթիի նահանգապետ Ակակի Մաչուտաձեն, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները:

«Ջորջիան բիզնես գոտի» ընկերությունը Ծնիսիում սառնարանային տնտեսությունը կառուցել է էժան ագրովարկերի նախագծի շրջանակներում, USAID/REAP-ի աջակցությամբ: Ընկերությունը վարկի տեսքով վերցրել էր 244,071 դոլար, իսկ USAID/REAP-ից՝ ստացել 98,277 դոլար:

Նոր տնտեսությունը հագեցված է սառնարանային արդի սարքավորումներով եւ կարող է միաժամանակ պահել 130 տոննա միրգ ու բանջարեղեն:

ՍԿՍՎԵԼ Է ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԸ

Գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման գործակալությունն սկսել է կոոպերատիվների մոնիտորինգը:

Մոնիտորինգի նպատակն է սահմանել, թե կոոպերատիվների գործունեությունը որքանով է համապատասխանում «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» օրենքի դրույթներին, ինչպես նաեւ կազմել կոոպերատիվների կողմից թողարկվող արտադրանքի տվյալների բազան: Մոնիտորինգի շրջանակներում, ծրագրվել է նաեւ անցկացնել կոոպերատիվների անդամների խորհրդատվություններ եւ վարժանքներ:

Նշենք, որ, հոկտեմբերի 28-ի դրությամբ, գյուղատնտեսական կոոպերատիվի կարգավիճակ է շնորհվել երկրի տարբեր տարածաշրջաններում գործող 281 սուբյեկտի: Դրանցից12-ը գործում են Թբիլիսիում, 46-ը՝ Քվեմո Քարթլիի, 29-ը՝ Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջաններում: